01.04.2026թ.

ք.Վանաձոր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Վանաձոր համայնքի Շիրակի խճուղի 34 հասցեում շինանյութի խանութ-սրահ կառուցելու վերաբերյալ հանրային լսումների

Բացման խոսքով հանդես եկավ Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պարտականություններ կատարող Արմեն Ալավերդյանը՝ ներկայացնելով հանրային քննարկումների նպատակը: Նա նշեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /03.05.2023թ. ՀՕ-150-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն (որոշումը խմբ. է ՀՀ կառավարության 28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ) որոշման համաձայն՝ 2026 թվականի ապրիլի 1-ին, ժամը 14:30-ին Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքում (ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22) տեղի են ունենում, Վանաձոր համայնքի Շիրակի խճուղի 34 հասցեում շինանյութի խանութ-սրահ կառուցելու վերաբերյալ հանրային լսումներ:

Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրվել է հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավերը https://vanadzor.am/content/3768 , ինչպես նաև այն փակցվել է Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար տեսանելի և մատչելի վայրում: Այնուհետև խոսքը փոխանցեց «Ա.Ս.Դ» ՍՊԸ տնօրեն, նախագծի ճարտարապետ Գրիգոր Պողոսյանին, ով ներկայացրեց Վանաձոր համայնքի Շիրակի խճուղի 34 հասցեում շինանյութի խանութի էսքիզային նախագիծը, որի մշակման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի կողմից տրված առաջադրանքը, ՀՀ գործող շինարարական նորմերը, անշարժ գույքի գրանցման վկայականը և հողամասի տեղագրական հանույթը:

Նախատեսվում է կառուցել երկհարկանի շինանյութի խանութ: Շինության հեռավորությունը ճանապարհից 18 մետր է: Շինության արտաքին չափերն են՝ 25.2×59.25: Կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 1493.1 քմ, բարեկարգման ընդհանուր մակերեսը՝ 1066.62 քմ, կանաչապատման մակերեսը՝ 520.25 քմ, ընդհանուր տարածքի 16.89%-ը: Մեքենաների մուտքն ու ելքը կազմակերպվելու է Շիրակի խճուղուց:

Շինության կիսանկուղային հարկում նախատեսվում է սանհանգույցներ 4.28 քմ, 3.03 քմ, 3.8 քմ, 2.10 քմ, 2.10 քմ, վերելակ 4.70 քմ, պահեստ՝ 1326.33 քմ, որը հարմարեցված է արտակարգ իրավիճակների պայմաններում ծառայել որպես ժամանակավոր ապաստան, աշխատասենյակ 17.12 քմ, հանդերձարաններ 11.53 քմ,

11.71 քմ, նախամուտքեր 4.16 քմ, 4.30 քմ, միջանցք 9.30 քմ: Կիսանկուղային հարկի օգտակար մակերեսը 1403.72 քմ, շինարարական մակերեսը 1476.87 քմ:

Առաջին (±0.00 նիշ) նախատեսվում է՝ նախամուտք 36.0 քմ, սրահ 1312.92 քմ, սանհանգույցներ 3.42 քմ, 3.03 քմ, 2.96 քմ, վերելակ 4.70 քմ, հանդերձարաններ 5.45 քմ, 5.35 քմ, աշխատասենյակներ 15.42 քմ, 7.19 քմ: Հարկի օգտակար մակերեսը 1408.88 քմ, շինարարական մակերեսը 1493.10 քմ:

Կիսանկուղային հարկում արտաքին պատերը իրականացվելու են 200 մմ հաստության բետոնե բլոկներով և բետոնով: Երեսպատումը նախատեսվում է իրականացնել բազալտե սալիկներով:

Առաջին հարկը նախատեսվում է իրականացնել գործարանային արտադրության մետաղական կոնստրուկցիաներով և սենդվիչ պանելներով: Ապակեպատումը՝ վիտրաժները, դռները և պատուհանները նախատեսված է ջերմակամրջակով, ալյումինե պրոֆիլներով:

Տանիքը նախատեսվում է իրականացնել գործարանային արտադրության մետաղական կոնստրուկցիաներով, տանիքածածկը՝ սենդվիչ պանելներով: Ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել կազամակերպված ներքին:

Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվում է իրականացնել կայանման տեղ, սանհանգույց, վերելակ և ապահովել անարգել մոտեցում բոլոր անհրաժեշտ կետերին:

-4.50 նիշի հարկի ստորգետնյա հատվածը ունի երկակի նշանակություն և անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Հարկում առկա է սանհանգույցներ՝ հարմարեցված բնակչության սակավաշարժ խմբի անձանց համար, վթարային անխափան լուսավորություն, որը հնարավորություն կստեղծի տևական ժամանակ անցկացնել այնտեղ: Նախատեսված է նաև օդափոխություն և ծխահեռացման համակարգ:

Հարց ու պատասխան

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պ/կ Արմեն Ալավերդյան – Նախագծային փաստաթղթերում նշված է, որ շենքը դասակարգված է որպես միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) օբյեկտ: Սակայն, հաշվի առնելով շինության ընդհանուր մակերեսը, որը 1500 մ^2 ավելի է, տվյալ օբյեկտը պետք է դասվի բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտների շարքին:

Համաձայն գործող նորմատիվ իրավական ակտերի՝ բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտների նախագծային փաստաթղթերը ենթակա են պետական համալիր փորձաքննության, ներառյալ օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների կողմից իրականացվող փորձաքննությունները և մասնագիտական եզրակացությունները:

Ներկայացված նախագծում օբյեկտի ռիսկայնության աստիճանի սխալ դասակարգումը հանգեցնում է պարտադիր փորձաքննության գործընթացների շրջանցման ռիսկի, ինչը հակասում է գործող օրենսդրության պահանջներին:

«Ա.Ս.Դ» ՍՊԸ տնօրեն, նախագծի ճարտարապետ Գրիգոր Պողոսյան - Քաղաքաշինության կոմիտեին կներկայացնենք պարզաբանման դիմում՝ մեր կողմից նախատեսվող շինարարական օբյեկտի՝ բարձր ռիսկայնության աստիճան ունեցող օբյեկտների թվին դասվելու վերաբերյալ:

Քաղաքացի Վաչագան Հովսեփյանը նշեց, որ դրական է գնահատում այն հանգամանքը, որ քաղաքի տվյալ հատվածում առկա է որոշակի կենտրոնացում, և ծայրամասեր գնալու անհրաժեշտություն չի առաջանում, եթե քաղաքացին ցանկանում է որևէ ապրանք ընտրել: Նա հետաքրքրվեց, թե ինչ սկզբունքով է ընտրվել տվյալ տարածքը, հաշվի առնելով, որ այնտեղ արդեն գործում են բազմաթիվ նմանատիպ խանութներ («Քարերի աշխարհ» խանութ, կահույքի խանութ), ինչը ենթադրում է նաև բարձր մրցակցություն: Միաժամանակ հարց բարձրացվեց, թե ինչ մրցակցային առավելություններ ունի տվյալ ընկերությունը՝ գների, տեսականու կամ այլ գործոնների առումով, որոնք կարող են ապահովել մրցունակություն:

«Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ մենեջեր Արշակ Հովսեփյան – Ցանկացած խանութ ունի իր հաճախորդը և մրցակցությունն էլ կայանում է ապրանքների որակի ապահովմամբ, ինչպես նաև հաճախորդների սպասարկման որակով: Քաղաքակիրթ բոլոր երկրներում նմանատիպ խանութները կենտրոնացված են մեկ վայրում:

«Ամբա Գրուպ» ՍՊԸ տնօրեն Արման Ամիրյան – Այդտեղ երկկողմանի ճիշտ նշանակություն ունի և բիզնեսի համար է հարմար, և հաճախորդի համար, կարողանում է տեսնել տեսականին և կատարել ընտրություն, հենց այդ պատճառով էլ ճիշտ մրցակցությունը երևալու է:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի և լրատվության բաժնի պետ Գեղանի Հակոբյանը հարց բարձրացրեց՝ քանի աշխատատեղ է նախատեսվում ստեղծել:

«Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ի մենեջեր Արշակ Հովսեփյանը պատասխանեց, որ հստակ թիվ նշել այս պահին չի կարող, սակայն նախատեսվում է մոտավորապես 20 և ավելի աշխատատեղ:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ Սուզաննա Ղարաղաշյանը նշեց, որ հնարավոր է առաջանա ավտոկայանման խնդիր, հատկապես մեծ մեքենաների դեպքում:

Գ.Պողոսյանը պարզաբանեց, որ նախատեսվում են ավտոկայանատեղիներ՝ ինչպես դիմացի հատվածում՝ հաճախորդների համար, այնպես էլ հետևի հատվածում՝ հիմնականում նախատեսվում է աշխատակիցների համար: Ինչ վերաբերում է մեծ մեքենաներին (հիմնականում առաքման), դրանք լինելու են ժամանակավոր մուտք ու ելք իրականացնող:

Ամփոփում

Հանրային լսումների ընթացքում ներկայացվեց Շիրակի խճուղի 34 հասցեում շինանյութի խանութ-սրահ կառուցելու նախագիծը: Քննարկվեցին ռիսկայնության դասակարգման, մրցակցության և ավտոկայանման հարցերը: Նշվեց, որ նախատեսվում է ստեղծել շուրջ 20 և ավելի աշխատատեղ:

Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 15:30-ին:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի խորհրդական Արեն Անանյանը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պ/կ Արմեն Ալավերդյանը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության բաժնի պետ Գեղանի Հակոբյանը, համայնքապետարանի աշխատակիցներ, «Ա.Ս.Դ» ՍՊԸ տնօրեն, նախագծի ճարտարապետ Գրիգոր Պողոսյանը, «Ամբա Գրուպ» ՍՊԸ տնօրեն Արման Ամիրյանը, «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ մենեջեր Արշակ Հովսեփյանը, քաղաքացի Վաչագան Հովսեփյանը:

Նախաձեռնող՝
«Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ մենեջեր _____ Ա.Հովսեփյան

Նիստը վարող՝
Վանաձորի համայնքապետարանի
ճարտարապետության և քաղաքաշինության
բաժնի պետի պ/կ _____ Ա.Ալավերդյան